ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ա. Հ. ՄԱՐՈՒԽՅԱՆ

Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը, նրա ազգային կուլտուրայի ծաղկումն ու ժողովրդի բարեկեցության բարձրացումը հնարավոր դարձան լենինյան ազգային քաղաքականության, երկրի սոցիալիստական ինդուստրացման ու գյուղատնտեսության կոլեկտիվացման, ինչպես նաև արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման հետևողական կիրառման շնորհիվ։

Այս բոլորը հնարավորություն տվեցին անցած քառասուն տարիների ընթացքում տեղական հարուստ հումքային և էներգետիկ ռեսուրսների օգտագործման հիման վրա ռեսպուբլիկայում ստեղծել բազմաճյուղ ժողովրդական տնտեսություն և առաջին հերթին՝ ժամանակակից առաջնակարգ սարքավորումներով զինված արդյունաբերություն։

Սովետական Հայաստանի տնտեսական և կուլտուրական զարգացման բոլոր հաջողությունների համար հայ ժողովուրդը մեծապես երախտապարտ է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության մշտական հոգատարությանը, ռուս և մեր երկրի մյուս ժողովուրդների եղբայրական օգնությանը։

1922 թվականին Ռուսաստանի Ֆեդերացիայի կառավարությունը Իվանովո-Վոզնեսենսկի բանվորների նախաձեռնությամբ Սովետական Հայաստանին նվեր ուղարկեց բամբակագործական մի ֆաբրիկա՝ 18 հազար իլիկով և 450 գործող մեքենաներով։ Այդ ֆաբրիկան հիմք հանդիսացավ Լենինականում բամբակագործական և տրիկոտաժային առաջնակարգ արդյունաբերություն ստեղծելու համար։ ՌՍՖՍՌ-ի կենտրոնական արդյունաբերական շրջաններից բազմաթիվ որակյալ տեքստիլագործներ գործուղվեցին Հայաստան։ Ամբողջ երկրի արդյունաբերության զարգացման, մասնավորապես նրա նոր ճյուղերի ստեղծման և արտադրության կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեցավ Սովետական Միության առավել զարգացած արդյունաբերական շրջաններից որակյալ մասնագետների գործուղումը և սարքավորումների առաքումը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում և նախապատերազմյան հնգամյակների տարիներին Հայաստանի աշխատավորները ջանք չխնայեցին ոչ միայն վերականգնելու պղնձարդյունաբերությունը, որ ռեսպուբլիկային անցյալից ժառանգություն մնացած ծանր արդյունաբերության միակ ճյուղն էր, այլև զգալի չափով ընդարձակեցին և զարգացրին այն։ Ռեսպուբլիկայում միաժամանակ ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր՝ քիմիական, մեքենաշինական, շինանյութերի, տեքստիլ-տրիկոտաժի, կոշիկի, կարի, սննդի և այլն։

Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման առաջնահերթ խնդիրը էներգետիկ բազայի և ոռոգման նոր սիստեմների ստեղծումն էր։ Ջունենալով վառելիքի սեփական բազա, իր սպառած քարածուխը և նավթամթերքը Հայաստանը ամբողջապես ներմուծում էր Դոնբասից, Ադրբեջանական ՍՍՌ-ից և Վրացական ՍՍՌ-ից։ Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա հարց է բարձրացվում ռեսպուբլիկայի ջրային ռեսուրսների օգտագործմամբ ստեղծել էներգետիկ սեփական տնտեսություն։ Դեռևս մինչև առաջին հնգամյակը կառուցվեցին Երևանի երկու հիդրոկայանները՝ Հրազդան գետի վրա և Լենգէսը՝ Ախուրյան գետի վրա։ Հետագայում Սևանա լճի և Հրազդան գետի ջրերը ոռոգման և էներգետիկ նպատակներով օգտագործելու համար սկսվեց հզոր հիդրոկայանների շինարարությունը։ Նախապատերազմյան տարիներին կառուցվեցին Ջորագէսը՝ Դերեդ գետի վրա և Սևանի կասկադի Քանաքեռի կայանը։ Բացի խոշոր հիդրոկայաններից կառուցվեցին նաև մի շարք միջին և փոքր հիդրոկայաններ, գլխավորապես շրջանային կենտրոններում։ Սովետական Հայաստանի գործող հիդրոկայանների կարողությունը 1940 թվականին 1913 թ. համեմատությամբ ավելացավ 37 անգամ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրանքը՝ 77 անգամ։ 1940 թ. Հայկական ՍՍՌ խոշոր արդյունաբերության արտադրանքի ամբողջ ծավալը 1913 թ. մակարդակը գերազանցեց 22,6 անգամ։ Արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը, չնայած գյուղատնտեսության արտադրանքի աննախընթաց աճին, կազմեց ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրանքի ավելի քան 80 տոկոսը։

Միաժամանակ տեղի էր ունենում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, նրա հետագա զարգացումը։ Սոցիալիստական հասարակության կառուցման համար, բացի ինդուստրիայի ստեղծումից, անհրաժեշտ էր նաև մանր գյուղացիական արտադրությունից անցնել սոցիալիստական խոշոր կոլեկտիվ գյուղատնտեսության։ Երկիրը երկար ժամանակ չէր կարելի պահել սեփականության երկու հակադիր՝ սոցիալիստական և մանր անհատական ձևերի վրա։ Առանց գյուղատնտեսության կոլեկտիվացման անհնարին էր վերացնել այն մեծ անհամամասնությունը, որ ստեղծվել էր աճող սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, գյուղատնտեսության հումքային ռեսուրսների և արդյունաբերության ու բնակչության պահանջների միջև։ Այս բոլորը գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը դարձրին անհետաձգելի անհրաժեշտություն, որը իրականացվեց ժողովրդական տնտեսության զարգացման առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում։

Կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Հայաստանի աշխատավորները էլեկտրիֆիկացմանը զուգահեռ մեծ աշխատանք տարան գյուղատնտեսական հողերի ոռոգման ուղղությամբ։ Կառուցվեցին մի շարք խոշոր ջրանցքներ։ Ոռոգելի հողատարածությունների ընդարձակումը մեծ չափով նպաստեց գյուղատնտեսության ընդհանուր զարգացմանը։

Ընդարձակվեցին գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունները։ Խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբուծության և բամբակագործության հետագա զարգացման հետ մեկտեղ սկսվեց նոր տեսակի տեխնիկական կուլտուրաների՝ ծխախոտի, շաքարի ճակնդեղի, եթերայուղատու և այլ կուլտուրաների մշակումը։ Զարգացման ուղին բռնեց նաև հանրային անասնաբուծությունը։

Բարձրացավ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և համախառն արտադրանքը, ավելացավ անասնարուծության մթերատվությունը, մեծ չափով աճեցին կոլտնտեսությունների համախառն և դրամական եկամուտները։ 1940 թվականին Հայաստանում արտադրվում էր ավելի շատ հացահատիկ, քան 1913 թվականին։ Այդ նույն ժամանակաշրջանում բամբակի հումքի համախառն արտադրանքը ավելացավ 2 անգամ, պտուղներինը՝ 3,2 անգամ։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1940 թ. ավելացավ 60 տոկոսով։

Ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի արագ զարգացման բազայի վրա սկսեց անշեղորեն բարելավվել աշխատավորների նյութական վիճակն ու բարձրանալ կուլտուրական մակարդակը։

Այսպիսով Հայաստանը ցարական Ռուսաստանի տնտեսապես հետամնաց ծայրամասից կարճ ժամանակի ընթացքում դարձավ զարգացած արդյունաբերություն և մեքենայացած սոցիալիստական խոշոր գյուղատնտեսություն ունեցող ռեսպուբլիկա։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին բացառիկ արիությամբ պայքարեց իր սոցիալիստական հայրենիքի անկախության համար։ Ռեսպուբլիկայի ամբողջ ժողովրդական տնտեսությունը պատերազմի տարիներին վերակառուցվեց և ի սպաս դրվեց մեր երկիրը ներխուժած ֆաշիստական բանդաների ոչնչացման գործին։ Առանձնապես մեծ փոփոխություններ տեղի ունեցան մետաղամշակման և մեքենաշինության արդյունաբերության մեջ։ Այդ ճյուղի արտադրանքը մեծ չափերով ավելացավ և 1944 թ. չորս անգամ գերազանցեց 1940 թ. մակարդակը։

Հետպատերազմյան տարիները ինչպես ամբողջ երկրին, այնպես էլ Սովետական Հայաստանին կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում բերեցին նոր, ավելի նշանակալից նվաճումներ։ Զգալիորեն արագացան արտադրողական ուժերի զարգացման տեմպերը, բարձրացավ աշխատավորների նյութական բարեկեցությունը, էլ ավելի ծաղկեց հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրան։

Սովետական Հայաստանի տնտեսական զարգացման հետպատերազմյան տարիների համար առավել բնորոշ են ծանր արդյունաբերության ճյուղերի բնդարձակումը և աճի բարձր տեմպերը։ Մեծ օգնություն ստանալով Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներից, ինչպես նաև օգտագործելով տեղական բնական հարուստ ռեսուրսները, մեր ռեսպուբլիկան կարողացավ կարճ ժամանակամիջոցում արագորեն զարգացնել ծանր արդյունաբերությունը և սկսեց արդյունաբերական արտադրանքի շատ տեսակներ արտահանել Սովետական Միության բազմաթիվ շրջաններ ու արտասահմանյան ավելի քան 42 երկրներ։

Հայկական ՍՍՌ ծանր արդյունաբերության զարգացման ուղին որոշվեց, մի կողմից, ամբողջ երկրի արդյունաբերական զարգացման հաջողություններով և, մյուս կողմից, ռեսպուբլիկայի բնական ռեսուրսների լայն օգտագործման առանձնահատկություններով։

Ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության մեջ առաջատար են դարձել մետաղամշակումը և մեքենաշինությունը, որոնց համախառն արտադրանքը 1959 թվականին, 1950 թվականի համեմատությամբ, աճել է 5,3 անգամ, իսկ 1940 թվականի համեմատությամբ՝ 38,2 անգամ։

Սովետական Միության ծանր արդյունաբերության զարգացման համամիութենական շրջանայնացման ու մասնագիտացման մեջ Հայաստանը ընթանում է գունավոր մետաղաձուլության, քիմիական արդյունաբերության, սարքաշինության և էլեկտրատեխնիկական մեքենաշինության մասնագիտացման ուղղությամբ։ Զարգացման այդ ուղղության ու բարձր տեմպերի շնորհիվ ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը 1958 թվականին, 1940 թվականի համեմատությամբ (ըստ բանվորների թվի), բարձրացավ մինչև 41 տոկոս։

Պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության մեջ արմատական փոփոխություններ տեղի ունեցան ինչպես արտադրանքի տեսակների ավելացման, այնպես էլ ձեռնարկությունների ցանցի ընդարձակման ուղղությամբ։ Առավել արագ աճեց մեքենաշինությունը, հատկապես էլեկտրատեխնիկական մեքենաշինությունն ու ռադիոտեխնիկական սարքաշինությունը։

Հայաստանում մեքենաշինության ճյուղերի զարգացումը խիստ բարենպաստ ազդեցություն ունեցավ երկրի արտադրողական ուժերի զարգացման վրա, բարձրացրեց բնակչության զբաղվածությունը, զգալիորեն ընդլայնեց ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության դերն ու նշանակությունը Սովետական Միության տնտեսական կյանքում։

Հետպատերազմյան տարիներին Սովետական Հայաստանի ծանր արդյունաբերության զարգացման կարևորագույն նվաճումներից է տեղական հումքի տեսակների, կիսաֆաբրիկատների ու մնացուկների և էներգետիկական ռեսուրսների ավելի ու ավելի լայն կոմպլեքսային օգտագործումը։

Այդ հանգամանքը հնարավորություն տվեց արդյունաբերության որոշ ճյուղերում անցնելու ավելի վերջնական արտադրական ցիկլերի (կիսաֆաբրիկատների վերամշակումից վերջնական արտադրանքի ստացմանը), որը զգալի չափով ընդլայնեց արտադրանքի տեսակները, իսկ էլեկտրատար արտադրության մեջ ապահովեց էլեկտրաէներգիայի ավելի արդյունավետ օգտագործումը։

Ռեսպուբլիկայի էներգետիկ տնտեսությունը էլ ավելի զարգացնելու համար Հայաստանի աշխատավորները արագ տեմպերով շարունակեցին Սևան-Հրազդան կասկադի հիդրոկայանների շինարարությունը։ Հետպատերազմյան տարիներին շարք մտան այդ կասկադի 3 նոր խոշոր հիդրոկայաններ՝ Սևանի ստորերկրյա, Գյումուշի և Արզնու հիդրոկայանները։ Այդ հնարավորություն տվեց զգալիորեն բարձրացնել Սևանից բաց թողնվող ջրերի օգտագործման գործակիցը և միաժամանակ ընդլայնել ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության էներգետիկական բազան։ 1959 թվականին ռեսպուբլիկայի էլեկտրակայանները արտադրել են 6,7 անգամ ավելի էլեկտրաէներգիա, քան 1940 թվականին։ Ներկայումս ռեսպուբլիկայի էլեկտրակայանները մեկ օրում 1,4 անգամ ավելի էլեկտրաէներգիա են արտադրում, քան բոլոր էլեկտրակայանները՝ 1913 թվականի ընթացքում։ Սովետական Հայաստանում բնակչության մեկ շնչի հաշվով երկու անգամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրվում, քան Իտալիայում և Ճապոնիայում միասին վերցրած։

Գունավոր մետաղաձուլության հետագա զարգացման տեսակետից խոշոր առաջընթաց հանդիսացավ Հայաստանում ալյումինի արդյունաբերության ստեղծումը։ Քանաքեռի ալյումինի գործարանին կից արդեն աշխատում է մի փորձնական ցեխ, որտեղ վերամշակվում են տեղական նեֆելինային սիենիթները՝ կավահող ստանալու համար։ Միաժամանակ նախագծված է ստեղծել

կավահողի խոշոր գործարան, որի խնդիրն է լինելու Հայաստանի ալյումինի արտադրության ապահովումը տեղական հումքով։ Հրազդանում կառուցվելու է լեռնաքիմիական կոմբինատ, որը կարտադրի նաև մի շարք այլ արժեքավոր նյութեր՝ պորտլանդ-ցեմենտ, նատրիումի և կալցիումի մետասիլիկատ, պոտաշ, բարձրորակ ապակու հումք՝ երևանիտ և այլն։

Հայաստանում գունավոր մետաղների արտադրության համախառն արտադրանքը 1959 թվականին, 1940 թվականի համեմատությամբ, աճել է մի քանի անգամ։

Քիմիական արդյունաբերությունը մեր ռեսպուբլիկայում սկսեց զարգանալ դիտավորապես էլեկտրատար ճյուղերի գծով՝ սկզբնական շրջանում վերամշակելով քիմիապես մաքուր և բարձրորակ կրաքարեր։ Ներկայումս քիմիական արդյունաբերությունը Ալավերդում և Կիրովականում հիմնականում վերամշակման է ենթարկում պղնձաձուլական արտադրության մնացուկները և՝ կիսաֆաբրիկատները։

Քիմիական արդյունաբերությունը մեծ դեր խաղաց ռեսպուբլիկայի տնտեսական զարգացման մեջ, հատկապես արդյունաբերական նոր հանգույցներ ստեղծելու գործում։ Դրանցից է Երևանի արդյունաբերական հանգույցը, որտեղ կենտրոնացած է կալցիումի, կարբիդի, կաուչուկի, պոլիվինիլացետատի, ավտոդողերի, լաքերի, ներկերի և ուրիշ շատ տեսակի քիմիական նյութերի արտադրությունը։

Քիմիական արդյունաբերության զարգացման շնորհիվ ձևավորվեց Կիրովականի արդյունաբերական հանգույցը, որտեղ ստեղծվել է կալցիումի, կարբիդի, ազոտային պարարտանյութերի և այլ քիմիկատների արտադրություն։ Կարելի է հիշել նաև Ալավերդու արդյունաբերական հանգույցը, որտեղ կազմակերպված են ծծմրաթթվի, սուպերֆոսֆատի, պղնձարջասպի և արտադրական այլ ճյուղեր, որոնք գունավոր մետաղաձուլության ձեռնարկությունների հետ միասին կազմում են քիմիական-մետաղաձուլական մի ամբողջական կոմպլեքս։

Հայրենական պատերազմից հետո Հայաստանում արագ թափով զարգացան մեքենաշինությունը, սարքաշինությունը և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը։ Վերջին 10—15 տարիների ընթացքում ռեսպուբլիկայում կառուցվեց մեքենաշինական ավելի քան 10 գործարան, որոնք թողարկում են բազմատեսակ արտադրանք՝ գեներատորներ, ուժային տրանսֆորմատորներ, էլեկտրաշարժիչներ, ստույգ էլեկտրաչափիչ գործիքներ, կարել, մետաղահատիչ հաստոցներ, կոմպրեսորներ, պոմպեր, ավտոմոբիլի պահեստային մասեր, տեքստիլ մեքենաների մասեր, ժամացույցներ, սննդի արդյունաբերության սարքավորում և այլն։ Էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքը 1958 թվականին, 1950 թվականի համեմատությամբ, աճեց 6,3 անգամ, իսկ սարքաշինությանը՝ 13,3 անգամ։

Հայաստանի մեքենաշինական արդյունաբերության արտադրանքի մեծ մասը արտահանվում է Սովետական Միության ռեսպուբլիկաները, ժողովրդական դեմոկրատիայի և կապիտալիստական մի շարք երկրներ։

Ռեսպուբլիկայում արդյունաբերական, բնակարանային, կուլտուր-լուսավորական ձեռնարկությունների շինարարության լայն ծավալման հետևանքով, հսկայական չափերով աճեց ու զարգացավ շինանյութերի արդյունաբերությունը։ Հայաստանում արտադրվող շինանյութերից մեծ համբավ են ստացել բազմատեսակ և բազմագույն տուֆերն ու մարմարը։ Շինանյութերի արտադրությունը

1959 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, աճել է 218,5 անգամ, իսկ 1940 թվականի համեմատությամբ՝ ավելի քան 14 անգամ։

Հայաստանի գյուղատնտեսության բազմակողմանի զարգացման և մասնագիտացման հետևանքով ստեղծվեցին սննդի և թեթև արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղեր։ Հատկապես գինու-կոնյակի և պահածոների արտադրության գծով Հայաստանը դարձել է Սովետական Միության հիմնական շրջաններից մեկը։ Ռեսպուբլիկայի թեթև ու սննդի արդյունաբերության հիմնական ճյուղերից են բամբակագործությունը, բրդի և մետաքսի արդյունաբերությունը, տրիկոտաժի և գորգի արդյունաբերությունը, կաշվի, կոշիկի, յուղի, պանրի, ծխախոտի և շաքարի, ինչպես նաև հանքային ջրերի արտադրությունը։ 1959 թ. թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ ավելացավ 46,5 անգամ, սննդի արդյունաբերության արտադրանքը՝ ավելի քան 22,1 անգամ։

Ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1959 թվականին 1913 թվականի համեմատությամբ աճել է 61,4 անգամ։

Բազմաճյուղ ու բազմատեսակ արդյունաբերության մեծ մասշտաբներով զարգացումը, հատկապես հետպատերազմյան տարիներին, զգալի չափով բարձրացրեց բնակչության զբաղվածությունը։ Աճեց ու բազմացավ բանվոր դասակարգը, արմատապես փոխվեց նրա որակը, ընդլայնվեց տեխնիկական ինտելիգենցիայի բանակը։

Արդյունաբերության և շինարարության ղեկավարման վերակառուցման շնորհիվ օպերատիվ կառավարման կենտրոնը տեղափոխվեց տնտեսական շրջանները և միութենական ռեսպուբլիկանները, որպիսի հանգամանքը զգալիորեն բարելավեց արդյունաբերության կառավարումը։ Բարձրացավ տեղերի նախաձեռնությունը արդյունաբերության տարբեր ճյուղերի միջև արտադրա-կազմակերպչական նպատակահարմար կապ ստեղծելու, ինչպես նաև տեղական աշխատանքային, էներգետիկ և հումքային ռեսուրսները լայնորեն ու լրիվ օգտագործելու հարցում։

Հետպատերազմյան տարիների ընթացքում ռեսպուբլիկան որոշակի հաջողությունների հասավ նաև սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման ընագավառում։ Ծանր արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը հնարավորություն տվեցին էլ ավելի զարգացնելու և ամրապնդելու գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան, բարձրացնելու գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման աստիճանը։ Մինչև 1958 թվականի սկիզբը ռեսպուբլիկայում գործում էր 58 մեքենա-տրակտորային կայան, 5000 տրակտորով (15 ուժանոցի հաշվով), ռեսպուբլիկան ուներ 800 կոմբայն, 200 բամբակահավաք մեքենա, 1800 տարբեր տեսակի սերմացան մեքենաներ, նույնքան էլ բերքահավաքի մեքենա, 500 բարդ կալսիչ և մեծ թվով զանազան հողհան մեքենաներ։ 1958 թ. մեքենա-տրակտորային կայանների հիմնական միջոցները 1940 թ. համեմատությամբ ավելացել էին մոտ 4 անգամ։

Հետպատերազմյան շրջանում Հայաստանում արագ կերպով սկսեց զարգանալ գյուղի էլեկտրիֆիկացիան։ Գյուղական էլեկտրակայանների կարողությունը ներկայումս 1940 թ. համեմատությամբ ավելացել է ավելի քան 4 անգամ, իսկ արտադրանքը՝ ավելի քան 7 անգամ։ Ռեսպուբլիկայում էլեկտրիֆիկացված է կոլտնտեսությունների 80 տոկոսից ավելին, լիովին էլեկտրիֆիկացված են բոլոր սովխոզները և վերանորոգման տեխնիկական կայանները։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության կարևորագույն խնդիրներից մեկը շարունակում է մնալ ջրովի հողատարածությունների հետագա ավելացումը։ Վերջին տարիներին ավելի լայն ծավալ են ստացել ջրաշինարարական աշխատանքները, նոր ջրանցքների ու ոռոգիչ սիստեմների կառուցումը։ Միայն վերջին 3—4 տարվա ընթացքում ջրովի հողատարածությունները ռեսպուբլիկայում ավելացել են մոտ 40 հազար հեկտարով։ Ներկայումս Հայաստանում 2,3 անգամ ավելի շատ ոռոգելի հողատարածություն կա, քան 1913 թվականին և մոտ 4 անգամ ավելի, քան 1919 թվականին։

Ոռոգելի հողատարածությունների ընդարձակումը հատկապես Արարատյան հարթավայրում ու նրա նախալեռնային գոտում մեծ չափով նպաստեց խաղողագործության և պտղարուծության զարգացմանը։ Բազմամյա տնկիների տարածությունը 1913 թվականի 13,6 հազար հեկտարի դիմաց ներկայումս հասնում է 51,1 հազար հեկտարի, որից 26,9 հազար հեկտարը կազմում են խաղողի և 24,2 հազ. հեկտարը՝ պտղատու այգիներ։ Խաղողի համախառն արտադրանքը 1959 թվականին, 1919 թվականի համեմատությամբ, ավելացել է ավելի քան 10 անգամ։

Ջրովի և անջրդի հողատարածություններում արմատավորվեցին տեխնիկական նոր կուլտուրաներ՝ շաքարի ճակնդեղ և ծխախոտ. ներկայումս ռեսպուբլիկայում ծխախոտից ստացվում է 14,6, իսկ առանձին կոլտնտեսություններում՝ մինչև 24 ցենտներ բարձրորակ բերք։ Ճակնդեղի միջին բերքատվությունը 273 ցենտներ է, կան շատ բրիգադներ ու օղակներ, որոնք մեկ հեկտարից ստանում են 400—500 ցենտներ։

Ռեսպուբլիկայի կոլտնտեսություններն ու սովխոզները վերջին 5—6 տարիների ընթացքում զգալի հաջողություններ ձեռք բերեցին գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման ուղղությամբ։ 1959 թվականին, 1940 թվականի համեմատությամբ, բամբակի հումքի համախառն արտադրանքը ավելացել է 30 տոկոսով, շաքարի ճակնդեղինը՝ 6 անգամ, ծխախոտինը՝ ավելի, քան 3 անգամ, բանջարեղենինը՝ մոտ 4 անգամ, խաղողինը՝ ավելի քան 2 անգամ և պտուղներինը՝ 28 տոկոսով։ Զգալի չափով ավելացել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը։ Ոչխարների գլխաքանակը ավելացել է 64 տոկոսով, խոզերինը՝ ավելի քան 2 անգամ։ Բարձրացել է նաև անասունների մթերատվությունը։ Յուրաքանչյուր 100 հեկտար հողատարածության դիմաց 1959 թվականին արտադրվել է 229 ցենտներ կաթ, 30 ցենտներ միս (սպանդանոցային քաշով)։ Այդ նույն ժամանակի ընթացքում ավելի բարձր տեմպերով է աճել կոլտնտեսությունների հանրային անասնարուծությունը թե՛ գլխաքանակի և թե՛ մթերատվության ցուցանիշներով։ Կովերի գլխաքանակը աճել է 2 անգամ, ոչխարներինը՝ 86,2 տոկոսով, խոզերինը՝ 2,6 անգամ, իսկ կաթի արտադրությունը ավելի քան կրկնապատկվել է։

Գյուղատնտեսական արտադրանքի աճը և գյուղատնտեսական մթերքների մթերման ու գնման գների բարձրացումը զգալի չափով ավելացրին կոլտնտեսությունների դրամական եկամուտները, ընդլայնեցին նրանց հիմնական արտադրական միջոցները և բարելավեցին գյուղացիության նյութական դրությունը։ 1958 թվականին կոլտնտեսությունների դրամական եկամուտները 1940 թվականի համեմատությամբ ավելացան 4,7 անգամ, իսկ անբաժանելի ֆոնդերը՝ 6,4 անգամ։

Սովետական Միության կառավարության որոշմամբ Սովետական Հայաստանը գյուղատնտեսական մթերքների արտադրման և պետական գնման առաջադրանքները կատարելու համար 1958 թվականին պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի աննախընթաց վերելքի, աշխատանքի արտադրողականության անշեղ բարձրացման հետևանքով մեծացավ ռեսպուբլիկայի ազգային եկամուտը, որը ռեալ հիմք հանդիսացավ աշխատավորների նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի զգալի բարձրացման համար։

Աշխատավորների նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի սիստեմատիկ աճը սոցիալիստական հասարակության զարգացման օրենքն է։ Սովետական պետությունը, Կոմունիստական պարտիան ջանք չեն խնայում աշխատավորների կյանքի նյութական, աշխատանքային ու կուլտուրական պայմանները անընդհատ բարելավելու համար։

Սոցիալիզմի ժամանակ աշխատավորների բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման միջոցների միակ աղբյուրը նրանց անձնական եկամուտները չեն (աշխատավարձը կամ կոլտնտեսություններից ստացած եկամուտները)։ Սովետական պետությունը այդ նպատակով պետական բյուջեից խոշոր հատկացումներ է անում ձրի ուսուցման, բժշկա-սանիտարական սպասարկման, սանատորիաների ու հանգստյան տների կառուցման, նախադպրոցական ցանցի պահպանման, կենսաթոշակների համար և այլն։ Միայն 1960 թվականի բյուջեով նախատեսվում է ռեսպուբլիկայում սոցիալ-կուլտուրական միջոցառումների գծով ծախսել 1,646 միլիոն ռուբլի՝ մոտ 33 տոկոսով ավելի, քան 1958 թվականին։ Այս գումարից լուսավորությանը կտրվի 913 միլիոն ռուբլի, առողջապահության և ֆիզկուլտուրայի գործին՝ 343 միլիոն ռուբլի։ Եթե 1940 թվականին սոցիալ-կուլտուրական ծախսերի գծով բնակչության մեկ շնչին ընկնում էր 244 ռուբլի, իսկ 1955 թվականին՝ 443 ռուբլի, ապա 1960 թ. այդ գումարը կկազմի 912 ռուբլի, որից լուսավորությանը՝ 537, իսկ առողջապահությանը՝ 204 ռուբլի։ Միայն 1959—1960 թվականներին սոցիալական ապահովագրության և բոլոր տեսակի թոշակների վճարումների համար ռեսպուբլիկայում ծախսվելու է մոտ 587 միլիոն ռուբլի։ Բազմազավակ մայրերին 1960 թվականին տրվելու է 75 միլիոն ռուբլու պետական նպաստ։

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Սովետական Հայաստանում մեծ աշխատանք է տարվում աշխատավորության բնակարանային պայմաններն արմատապես բարելավելու ուղղությամբ։ Ռեսպուբլիկայում 40 տարվա ընթացքում միայն պետական շինարարության գծով շահագործման է հանձնվել 3323 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, իսկ անհատական բնակարանային շինարարության գծով՝ 1559 հազար քառ. մետր։

Աշխատավորների նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման կարևորագույն գործոնը նրանց ռեալ աշխատավարձի ու եկամուտների ավելացումն է։ 1959 թվականին բնակչության եկամուտների ընդհանուր գումարը 400 միլիոն ռուբլով ավելի էր, քան 1957 թվականին։ 1958 թվականին բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձը և կոլտնտեսականների մթերային ու դրամական եկամուտները, 1940 թվականի համեմատությամբ, ավելացան մոտ 2 անգամ։

Ժողովրդական անտեսության, հատկապես սոցիալիստական գյուղատնտեսության ընդարձակման վերջին տարիներին ձեռքբերած հաջողությունները և զարգացման հեռանկարները հնարավորություն ընձեռեցին առաջ քաշելու բնակչության մեկ շնչին ընկնող մսի, կաթի և յուղի արտադրությամբ ԱՄՆ-ին հասնելու և անցնելու խնդիրը։ Դրա իրականացման համար Սովետական Միությունը պետք է յուրաքանչյուր 100 հեկտար հողատարածության դիմաց արտադրի 42 ցենտներ միս և 141 ցենտներ կաթ։

Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը և սովխոզների աշխատողները մեծ եռանդով ու ոգևորությամբ ձեռնամուխ եղան այդ հոյակապ խնդրի կատարմանը։ Ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները և սովխոզները 1960 թվականի համար ընդունած պարտավորությունների համաձայն յուրաքանչյուր 100 հեկտար հողատարածության դիմաց պետք է արտադրեն 350 ցենտներ կաթ և 45 ցենտներ միս։

Սովետական Միությունը արդյունաբերական արտադրանքի ծավալով ներկայումս աշխարհում բռնում է երկրորդ տեղը, իսկ տնտեսական զարգացման տեմպերով մի քանի անգամ գերազանցում է կապիտալիստական երկրներին, այդ թվում և Ամերիկայի Միացյալ Նահանգներին։

Սովետական կարգերը, տնտեսության սոցիալիստական սիստեմը իրենց մեջ կրում են անսպառ հնարավորություններ և ուժ՝ հասարակության արտադրողական ուժերի հզոր զարգացման համար։ Որքան Սովետական Միությունը առաջ է ընթանում դեպի կոմունիզմ, այնքան ավելի լայն ու պայծառ հորիզոններ են բացվում նրա առջև, յուրաքանչյուր միութենական ռեսպուբլիկայի առջև։ Սովետական Հայաստանը, որպես Սովետական Միության անբաժանելի մաս, ունի բոլոր հեռանկարները հետագա էլ ավելի արագ զարգացման համար։

ՍՄԿՊ XXI համագումարը քննարկեց և հաստատեց կոմունիստական հասարակության կառուցման մեծ ծրագիրը։ Համագումարը հավանություն տվեց միութենական ռեսպուբլիկաների հետագա տնտեսական զարգացման ուղղություններին, որոշեց նրանց զարգացման տեմպերն ու արտադրության ծավալը՝ 1959—1965 թվականներին։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը 1959—1965 թվականների ժամանակաշրջանում լեռնահանքային արդյունաբերության բնագավառում ընթանալու է ռեսպուբլիկայի արդյունաբերության առաջավոր ճյուղերից մեկի՝ գունավոր մետաղաձուլության զարգացման, նրա լեռնահանքային բազայի ընդարձակման, հանքավայրերի շահագործման պայմանների արմատական բարելավման, ինչպես նաև հազվագյուտ ու ցրված մետաղների յուրացման ուղղությամբ։ Պղնձի և մոլիբդենի հանույթն ու վերամշակումը 1965 թվականին 1958 թվականի համեմատությամբ ավելանալու է 4 անգամ։ Վերակառուցվելու և ընդարձակվելու են Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատը, Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատը, ավարտվելու է Ագարակի կոմբինատի շինարարությունը և այլն։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման մյուս գլխավոր ուղղությունը քիմիական արդյունաբերությունն է։ Յոթնամյակի ընթացքում նրա արտադրանքը աճելու է 3,3 անգամ։ Քիմիական արդյունաբերությունը հատկապես զարգանալու է տեղական հումքի կոմպլեքսային օգտագործման հիման վրա՝ օրգանական սինթեզի եղանակով մի շարք նոր նյութերի ստացման ուղղությամբ։ Ժողովրդատնտեսական կարևորություն ունեցող քիմիական մի շարք

նյութերի արտադրություն կկազմակերպվի բնական գազի մշակման հիման վրա։ Հրազդան քաղաքում կազմակերպվելու է կապրոնային թելերի արտադրությունը։ 1961 թվականին իր առաջին արտադրանքը կտա Կիրովականի արհեստական մետաքսի գործարանը։

Յոթնամյակի ընթացքում բարձր տեմպերով զարգանալու է մեքենաշինությունը, հատկապես էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, սարքաշինական արդյունաբերությունը։ Ընդարձակվելու է ավտոմատիկայի ու էլեկտրոնիկայի սարքավորումների արտադրությունը։ Այս երկու ճյուղերի արտադրանքը 1965 թվականին 1958 թվականի համեմատությամբ կաճի 8,4 անգամ։ Հայաստանի հաստոցաշինական արդյունաբերությունը կտա ավելի քան 40 տեսակի նոր կոնստրուկցիայի ճշգրիտ ու արագընթաց մետաղահատ հաստոցներ, ինչպես նաև մի քանի տեսակ քարհատ ու քար մշակող դազգահներ։ Մեքենաշինական և մետաղամշակման նոր ձեռնարկությունները մեծ մասամբ կըստեղծվեն ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում և բաղա կհանդիսանան նոր արդյունաբերական հանգույցների ստեղծման համար։

Յոթնամյա պլանի կատարման շնորհիվ 1965 թվականին Հայաստանի տեսակարար կշիռը Սովետական Միության ամբողջ արտադրանքի մեջ կկազմի՝ էլեկտրատեխնիկական սարքավորումների արտադրության գծով 8 տոկոս, դազգահաշինության գծով՝ 7,7 տոկոս, շարժիչ էլեկտրականների կոմպլեկտների արտադրության գծով՝ 33, էլեկտրաշարժիչ սարքավորումների գծով՝ 9, փաթաթման լարերի գծով՝ 7,4 և ժամացույցների արտադրության գծով՝ 7 տոկոս։

Յոթնամյա պլանով նախատեսված արտադրական ծրագիրը բոլոր գծերով ժամանակին կատարելու համար անհրաժեշտ է կրկնապատկել էլեկտրակայանների կարողությունը։ Այդ նպատակով կավարտվի Երևանի և Հրազդանի ջերմաէլեկտրակայանների կառուցումը բնական գազի հիման վրա, ինչպես նաև կսկսվի Տաթևի էլեկտրակայանի շինարարությունը։

Թե արդյունաբերության և թե բնակչության ջերմա-էլեկտրամատակարարման բարելավման գործում մեծ դեր կխաղա գազիֆիկացումը։ Ադրբեջանից ստացվող բնական գազից կօգտվեն ռեսպուբլիկայի շատ գործարաններ, ֆաբրիկաներ, քաղաքներ։ Յոթնամյակի ընթացքում նախատեսված է ավելի քան 100 հազար բնակարան գազիֆիկացման ենթարկել։

Արդյունաբերական, գյուղական ու բնակարանային շինարարության պահանջները շինանյութով ապահովելու համար նախատեսվում է մեծ ծավալով ավելացնել տուֆերի, բազալտի, ցեմենտի և շինարարական մյուս տեսակի նյութերի արտադրությունը։

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերից են թեթև ու սննդի արդյունաբերությունը։ Դրանցից առաջինը իր արտադրանքը ավելացնելու է 60,2 տոկոսով, իսկ սննդի արդյունաբերությունը է՛լ ավելի կզարգանա և բազմաճյուղ կդառնա։ Խաղողի և պտղատու այգիների տարածության ավելացման ու բերքատվության բարձրացման շնորհիվ գինիների արտադրությունը 1957 թվականին 2,7 միլիոն դեկալիտրից 1965 թվականին կհասնի 5,4 միլիոն դեկալիտրի, պահածոների և կաթնա-մսեղենի արտադրությունը կավելանա 2 անգամ։

Հատուկ ուշադրություն է դարձվելու տրանսպորտի բոլոր տեսակների զարգացմանը, նրանց կապիտալ վերանորոգումներին, երկաթուղային տրանսպորտի էլեկտրիֆիկացմանը։ Նախատեսվում է այս բնագավառներում կապիտալ ներդրումները ավելացնել 3,3 անգամ։

Ներկա յոթնամյակում Սովետական Հայաստանի արդյունաբերության տարեկան միջին աճը կլինի 12,8 տոկոս։ Արդյունաբերության համախառն արտադրանքը նույն ժամանակամիջոցում կաճի 2,3 անգամ։

Մեծ են նաև սոցիալիստական գյուղատնտեսության առաջ կանգնած խնդիրները։ 1953 թվականից հետո իրականացված մի շարք միջոցառումները արմատապես բարեփոխեցին գյուղատնտեսության վիճակը։ Սովետական Հայաստանում ևս, ինչպես ամբողջ Միության մեջ, գյուղատնտեսությունը իր բոլոր ճյուղերով վերելք է ապրում։

1959—1965 թվականների ընթացքում խաղողի և պտղատու այգիների տարածությունը կավելանա մոտ 2 անգամ։ Բերքատվությունը մեկ հեկտարից նախատեսվում է հասցնել՝ խաղողինը 80 ցենտների, պտուղներինը՝ 60 ցենտների։ Դա հնարավորություն կտա խաղողի համախառն արտադրանքն ավելացնել 2,8, իսկ պտուղներինը՝ 2,7 անգամ։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից են նաև ծխախոտագործությունն ու ճակնդեղագործությունը։ Ծխախոտի արտադրությունը նախատեսվում է ավելացնել 29 տոկոսով, միջին բերքը մեկ հեկտարից հասցնելով 15—16 ցենտների, իսկ շաքարի ճակնդեղի արտադրությունը պետք է ավելանա մոտ 14,6 տոկոսով։

Նոր, կարևոր խնդիրներ են դրվում անասնաբուծության առջև։ Դրանց կատարումն ընթանալու է երկու ճանապարհով. մի կողմից ավելանալու է անասունների գլխաքանակը, մյուս կողմից խիստ բարձրանալու է անասունների մթերատվությունը՝ անասնացեղի բարելավման, մթերատու անասունների, հատկապես կովերի տեսակարար կշիռը հոտի մեջ ավելացնելու, անասնակերի բազան հարստացնելու և կորուստների դեմ պայքարելու միջոցով։ Այդ ամենի շնորհիվ մսի արտադրությունը ռեսպուբլիկայում 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, ավելանալու է 1,7 անգամ, կաթինը՝ 1,6, ձվինը՝ 1,7, բրդինը՝ 1,8 անգամ։ 100 հեկտար գյուղատնտեսական հողատարածության հաշվով պետք է արտադրվի միս՝ 45 ցենտներ, կաթ՝ 369 ցենտներ, բուրդ՝ 470 կգ, ձու 91,5 հազար հատ (100 հեկտար հացահատիկի ցանքի հաշվով)։

Արդյունաբերության ու գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների կատարումը ապահովված է կապիտալ ներդրումների մեծ գումարով։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը պետական կապիտալ ներդրումների գծով կստանա 12,8 միլիարդ ռուբլի, կամ 2,5 անգամ ավելի, քան 1952—1958 թվականների ընթացքում։ Գյուղատնտեսությունը, բացի պետական ներդրումներից, կոլտնտեսությունների սեփական միջոցների հաշվին կստանա մոտ 2 միլիարդ ռուբլի, այսինքն մոտավորապես այնքան, որքան ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները կապիտալ ներդրումներ են արել իրենց գոյության ողջ ընթացքում։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, առևտրի զարգացման յոթնամյա պլանի կատարումը մեծ չափով կավելացնի ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքը և նրա ազգային եկամուտը։ Ըստ Պետպլանի հաշվումների, ռեսպուբլիկայի ազգային եկամուտը

1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, կաճի 2,2 անգամ, իսկ բնակչության դրամական եկամուտները՝ 47,3 տոկոսով։ Այս բոլորը ռեալ հիմք կհանդիսանան աշխատավորների նյութական դրության ու կուլտուրական մակարդակի է՛լ ավելի բարձրացման համար։

Ռեսպուբլիկայի աշխատավորները մեծագույն եռանդով սկսել են յոթնամյակով նախատեսված առաջադրանքների կատարումը։

Յոթնամյակի առաջին տարվա՝ 1959 թվականի, պլանների հաջող կատարումը յոթնամյակը ժամկետից շուտ կատարելու գրավականն է։ Արդյունաբերությունը 1959 թվականի արտադրական ծրագիրը բոլոր գծերով կատարեց դեկտեմբերի 16-ին։

Ռեսպուբլիկայի ֆաբրիկաներում, գործարաններում, հանքավայրերում, սովխոզներում ու կոլտնտեսություններում լայնորեն ծավալվում է սոցիալիստական մրցությունը։ Սովետական Հայաստանի 40-ամյակին՝ 1960 թվականի նոյեմբերի 29-ին, արտադրական ծրագրերի բոլոր ցուցանիշներով գերակատարումը կլինի Սովետական Հայաստանի լուման կոմունիզմի կառուցման մեծ գործում։

ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

А. О. МАРУХЯН

(Резюме)

За годы Советской власти произошли большие изменения в экономике республики. Армения превратилась в индустриальную республику с развитой многоотраслевой промышленностью, с интенсивным механизированным коллективным сельским хозяйством. Ныне промышленность Советской Армении представляет сложный комплекс ряда отраслей (цветная металлургия, химическая, машиностроительная, текстильная, пищевая промышленность и др.). Ведущее место занимают цветная металлургия, химическая промышленность и машиностроение. В 1959 г. валовая продукция всей промышленности Армении превысила объем производства 1913 г. в 61,1 раза, а по сравнению с 1940 г. увеличилась в семь с лишним раз. Удельный вес тяжелой индустрии (по валовой продукции, в ценах 1955 г.) составлял в 1959 г. около 41%. Развитию промышленности способствовало широкое использование разнообразных рудных и нерудных полезных ископаемых, а также значительных ресурсов гидроэнергии.

В послевоенный период в структуре промышленности произошли существенные изменения — в значительных размерах выросла продукция машиностроения. По сравнению с 1950 г. в 1958 г. объем продукции машиностроения возрос в 4,3 раза. Особенно быстрыми темпами развивались электротехническая промышленность и приборостроение. Значительно возрос удельный вес химической промышленности в валовой продукции промышленности республики.

Многоотраслевой характер промышленности обусловливает широкие и разносторонние экономические связи почти со всеми районами СССР.

Из Армянской ССР вывозятся в союзные республики и во многие зарубежные страны продукция машиностроения, электротехники, приборостроения, химии, цветной металлургии, строительные материалы, а также изделия легкой и пищевой промышленности.

В Армянской ССР развитие сельского хозяйства за прошедшие 40 лет теснейшим образом было связано с развитием орошения, с расширением площадей поливных земель. В дореволюционное время в Армении имелось 97 тысяч га поливных земель. В период господства дашнаков орошаемая площадь сократилась до 60,4 тысячи га. После установления Советской власти построена широкая сеть новых, крупных оросительных каналов. Площадь поливных земель в республике с 1913 по 1959 г. увеличилась в 2,3 раза и достигла 225 тысяч га. Площадь плодовых садов и виноградников с 13,6 тысячи га в 1913 г. увеличилась до 52,1 тысячи га в 1959 г. Существенные перемены произошли и в полеводстве. Площадь посевов всех сельскохозяйственных культур с 1913 по 1959 г. увеличилась на 22% и достигла 422,3 тысячи га. Значительно изменилась структура посевных площадей, в основном благодаря возникновению новых отраслей растениеводства (в частности, табаководства и свеклосеяния).

Животноводство является важнейшей отраслью сельского хозяйства горных районов республики. Его развитие шло как по пути роста поголовья скота, так и повышения его продуктивности. Намного улучшился породный состав скота. Резко увеличилось, особенно за последние годы, производство мяса, молока, шерсти и других животноводческих продуктов. В 1958 г. на 100 га сельскохозяйственных угодий было произведено: молока — 223 центнера, мяса — 47 центнеров (в живом весе) и шерсти — 229 килограммов.

За годы Советской власти Армения стала страной высокоразвитой социалистической промышленности и коллективного сельского хозяйства. Осуществление задач семилетнего плана развития народного хозяйства на 1959—1965 гг. еще больше повысит экономику республики и уровень материально-культурной жизни армянского народа.